



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

23.3
-81



333.3(47.9)

Ա-80

Ալեքսանդր Մամիկոնյան

ՀՈՂԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ

ԿՈՎԿԱՍՈՒՄ

ՀԵՑԵԶՈՑՈՒԹԻՒՆ

300
1146-ԱՏ

Տպարան „ՅԵՐԱԿԱՆ ԱԼԵԽԱՆԴՐՈՎԱՐԸ
1906
(42)

ՀԵՂԻՆԱԿԻ

ԱԺԲԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ առանձին տպագրւած, կամ լոյս տեսած այլ եւ
այլ պարբերական հրատարակութիւնների մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՆ ԵՒ ՊԱՏՄՈՒԾ

1. Սուլբանը Խալամի խալիֆը չէ, Մշակ 1895 № 110-118
2. Օսմանեանների 600 ամեակը " 1896 № 31
3. Հաւրիւն " " " 1896 № 33 34
4. Խոլան եւ Ռեֆորմ Տարադ 1898 № 2 16
5. Պարսկաստանի քրիստոն Մշակ 1899 № 187-230
6. Փողոցային տեսարանները Թաւրիզի Տարադ 1900 № 17-48
7. Աւրապատականի վիճակը Երիտ Հայաս. 1903 թ.
8. Թաւրիզի Հայուննեաց բարեզ. բնկերութեան տասնա-
մեակը " " " 1900 № 37
9. Կարա Մուրզա Վերածնութիւն Զ. Հայրեն. 1902 № 139
• " " ԿՈՄՊՈԶԻՑԻՑ Գեղունի. " № 5-6
• " " ՈԴԵՒՈՐՈՒԹԻՒՆ Սպրիւր. " № 5-6
10. Հայածանի Բարիզմի դեմ Տարադ " 1903 № 25-32
11. Խմամար Տարադ " " " 1904 № 2-8
12. Բարիզմ կամ Քեհայինները Լուժա " 1905 № 3-10
13. Թաղթիաք Տարադ " " " 1905 № 29
14. Աւրապատականի Աղմինիսրացիան Արշալոյս 1905 № 24-33
15. " Թատավարութիւնը 1906 թ Ալեխանդրապոլ
16. Հողատրութիւնը Կովկասում " "

121 FEB 2013

300

1146-ԱՃ

333.3 ան
Q-81

Խորենիկ

ՀՈՂԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ

ԱՊՎԱԱՍՈՒՐԻՄ

Հ Ը Ն Ա Հ Յ Ա Հ Ա Հ Ա Հ

ՀԵՏԾԱՑՈՒԹԻՒՆ



Տպարան „ՃիթՈԿԱ” Ալեքսանդրապոլ

1906

(42)

ՀՈՂԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ

ԿՈՎԿԱՍՈՒՄ

Մեր գրականութիւնը, ամբողջ տասնեհինգ դարի հայկական պատմութիւնը շատ ժատ տեղեկութիւններ է թողել մեր երկրի հոգատիրութեան մասին։ Մեր պատմաբանների ժողովածուից և Մխիթար Գօշի օրէնսդրութեան փրբից միմիայն ենթագրութիւններ կարելի է գուրս բերել. քննադատութիւնը դեռ ևս գրական փաստ մեզ չէ տւել։ Մեր գրացի Վրացիները այս մասին մեղնից հարուստ չեն, իսկ Եղանների, Ափխազների, Լեզգիների, Զերբէզների և ուրիշ Կովկասիան բնիկների ազբիւրները աւելի ազբատ են, բանի որ նրանցից ոչ մեկը չի ունեցել ինքնուրոյն գրականութիւն կամ տոհմարանութիւն։ Եթէ հնար լինէր Կովկասի շուրջը քննակուզ ցեղերի ազգագրութիւնները կազմել, գուցէ հնարաւոր լինէր որոշ եզրակացութիւնների համնել, բայց տարաբախտաբար գրանից էլ գրկւած ենք, բանի որ բնիկներից ուսումնական ձեռնահասները չեն եղել, չեն ուսումնասիրել, իսկ օտար գիտնականներն անձանօթ լինելով ժողո-

վարպի լեզվին, պատմութեան, կրօնին և աւանդութիւններին, չեն կարողացել գոյութիւն ունեցող կեանքի խորքերը թափանցել, բնիկն ու օտարածուտը զանազմնել և այսպէս լուսաբանել: Կովկասեան ցեղերի օրէնքների, սսվորութիւնների (ադաթ), ծէսերի, հըրէնների, կախարդների, նախապաշարումների մասին Թուսական գրականութեան արտադրութիւնները այնքան մօտ է իրականութեան, որքան ճիշտ է նրանց ունեցած կարծիքները հայկական եկեղեցու և գրականութեան մասին:

Եյս պատճառով իսլամի տիրապետութիւնից առաջ Կովկասում եղած հազարիրութեան (Յամլևաձեհի) մասին տակիր ամէն մի բառ կարելի է վիճելի համարել և անթիւ ենթադրութիւնների տեղի տալ: Ուստի սոյն յօդւածում մներ շենք ցանկանում հնաւանդ սովորութիւններից, արձանագրութիւններից կազմւած ենթադրութիւնների մասին կարծիր յայտնել, այլ մեր խօսքը ամփոփում ենք, թէ Շնչ վիճակումն եր հազարիրութիւնը Կովկասում իսլամի տիրապետութեան ժամանակ և ինչ վիճակի ենթարկեց Թուսական տիրապետութիւնից յետո:

1. Ինչպէս յայտնի է, իսլամի բարոզութեան առաջին դարում, Էօմէրի, Օսմանի օրով, արաբացիները մտան Հայաստան, Հասան մինչե Կովկաս, Քարբանդ: Էօմէրանների, Արասեանների լիազօրները նստան Հայաստանի սրբի մէջ, Առրպտտականում, Վրաստանում և իսլամի սրով Հուրանական-Ծէրիական կարգերը գործադրել տւին մեր երկրում: Խալիֆների գերիշխանութեան շրջանում Ոստիկանները, Հայկական Բաղրա-

տունները, Արծրունիները, Մամիկոննեանները, Վրացի իշխանները այս երկրում Ամիրապետների կամ սրանց լիազօրների վալիներ, կամ նահանգապետներն էին իրենց վիճակում, որոնք չէին բաւականանում տարեկան գանձած սակու, արծաթի, նժոյգների, կայսերի, պատանիների հարկերով, այլ պահանջում էին երկրի մէջ իսլամի չէրիաթը իսկութեամբ գործադրել: Իշխանները ոչ միայն իրենց վատիկասուն դուստրները պարտաւորած էին կնութեան տալ իսլամի նշանաւոր պաշտօնականներին, այլ պարտաւորած էին զոնէ տաերես խոլամը դաւանել: Անօրէն ստովկանները երկիրը խոպան նւաճելու համար, ոչ միայն հայկական արիւնով սովորել էին ամբողջ երկիրը, այլ նենդամտութեամբ կոտորում էին հախարաններին և նրանց իրար գէմ զըրգաւելով, մաշում էին սրանց ներքին երկպառակութիւններով: Արտրական հնիփ պարբերական արշաւանքներից, Սելջուկների աւարառութիւններից, Զինվիզ-խանի, Բուզարի աւերածութիւններից յետո, զրեթէ ութ զար Կովկասը մնաց բացարձակալիս խոլամի իշխանութեան ձեռքը, որոնց շրջանում Կովկասում սովորական գարձաւ և հիմնաւորեց շէրիական կարգերը, մանաւանդ հոգալին խոնդիրներում: Ո՛չ միայն բնիկ իշխանները ջնջեցին, այլ ժողովուրդին մարդահամարի ենթարկեցին, ամէն մի բրիստոնէի զիլից կապար կախեցին, նրա կեանքի փրկանները զճարւած լինելը ստուգելու համար և նրանց յանձնեցին երկրի մշակութիւնը: Խոլամի կառավարիչները երկրի ամենաարդիւնարեր հողերը, անտառները, այգիները վագֆին ու Խալիֆին յատկացրին և ամրող երկիրը համայնական (համիլամութեան ընդհան-

բականութեան) հողի վերածեցին: Ոչ միայն իշխանական կալւածներն ու այգեստանները զրաւեցին, այլ երկրում գոյութիւն ունեցող վանքերի, տաճարների և սրբատեղերի բոլոր վիւզերը, անտառները և ազգակենները յափշտափեցին և բաժանեցին հողագործ ու անապահ ժողովուրդին արդիւնաբերելու:

2. Հուրանի բացարձակ պատվամի համաձայն (սուրբա Բէկարա 27 այաթ), Ալլահն է բոլոր աշխարհի տէրը: Նա այս երկիրը ստեղծել է իսլամի զաւակների աշխարհային վայելչութեան համար և աւանդել է խալիֆին, որ զործագրի հաւատացեալների բարօրութեան համար: Հայհոյովներից (ըեափիր) խըլւած և նւաճւած բոլոր հողերը խալամական համայնքին է պատկանում, որը շի կարելի անշատել, բաժանել, ծախել կամ օտարացնել: Իսլամական իշխանութեան բոլոր երկիրները—մշակելի, անմշակ թէ անապատ—պետական, հասարակական է, այս հողի մէջ մասնաւոր տէր գոյութիւն շի կարող ունենալ, հողը շի կարելի անհատականացնել, առանձնացնել կամ մասնաւորել: Խոլամի պետութիւնը համաձայն զուրանի (սուրբա Յնֆատ 62 այաթ, ևս 15-16 այ.) պարտաւոր է միշտ մեծ զինւորական զօրութիւն պահպանել, մահաւանդ այրումի, որոնցով հնարաւորութիւն ունենա նւաճել հայհոյովների իշխանութեան տակ զանուած երկիրները: Իսկ այս այրումին ու զինւորական զօրութիւնները պահպանեյու միակ տղրիւրն է, խոլամի պետական համայնքիների, որը սոսորդական անասունների, կամ գաղանների երամակները և նրանց ճարակատեղերը, քանի որ այդ բոլորը ծառայելու են խոլամի ներկայ և ապագա շահնիքին: Մինչև անգամ ռայախի գոււառից գաւառ գտնենելու, իսր պապերի գերեզմաններից, կամ սրբագրիներից բաժանելու իրաւունքը սահմանափակւած է, թէն ժաղավորդի-հողագործը աղատ է, նրա յօժարական պաղթականութիւնը արգելելու իշխանութիւնից զրիւած է կառավարութիւնը: Երկրագործութեան համար փափկացրած հողը, անասնապահութեան համար յարմարեցրած և գրաւած արօտը ռայախին է, ռայան էլ հողինը, սրանց իրարից բաժանելու իշխանութիւն շի տրւած ոչ որի: Բայց երկրագործը իւր ուժից տ-

3. Թէի իսլամի համայնական հողը շի կարող մասնաւոր անհատի սեփականութիւն (propriété) գտնալ, ոչ որ շի կարող իսլամի արինով նւաճւած որիէ հոգամասի վրայ իշխել, բայց հողի եղեսից օգտվութեան իրաւունքը հողի սկզբնական մշակողի, նախնական վափկացնողի եւ պարարագնողի անփանիլի, անընարարելի որբանութիւնն է, որը շի կարող խիել ոչ որ, նայն խալիֆին անգամ, իմամն անգամ որիէ փոխարինութեամբ, եթէ մշակողը չկօժարի, շնամաձայնիւթիւն թէի իսլամի վայելչութիւնը մասնւած ռայայի (ոչ միւլիման ժողովուրդ) զօրյը և ընտանիքը ամբողջապէս պատկանում է խոլամի համայնքին, նրա արգիւնաբերած բերբը, բարին պիտի ծառայէ խոլամի զաւակների բարօրութեանը, բայց ռայախի պարարտացրած հողից հեռացնելու իրաւունք չունի իսլամը, ինչպէս շի կարող չնշել ու անհետացնել վայրի սոսորդական անասունների, կամ գաղանների երամակները և նրանց ճարակատեղերը, քանի որ այդ բոլորը ծառայելու իսլամի ներկայ և ապագա շահնիքին: Մինչև անգամ ռայախի գոււառից գաւառ գտնենելու, իսր պապերի գերեզմաններից, կամ սրբագրիներից բաժանելու իրաւունքը սահմանափակւած է, թէն ժաղավորդի-հողագործը աղատ է, նրա յօժարական պաղթականութիւնը արգելելու իշխանութիւնից զրիւած է կառավարութիւնը: Երկրագործութեան համար փափկացրած հողը, անասնապահութեան համար յարմարեցրած և գրաւած արօտը ռայախին է, ռայան էլ հողինը, սրանց իրարից բաժանելու իշխանութիւն շի տրւած ոչ որի: Բայց երկրագործը իւր ուժից տ-

ւելի հոդ իւրացնելու իրաւունք շունի, սրբան հոդ սրամին տարի ցանում է, այնքան էլ կարող է հերկել կամ խռպան թողնել: Կամ որբան արօտի սր պէտք ունին անամնապահի հօտերը, ջոկերը, այնքան միայն կարող է իւրացնել, ոչ աւելի: Եթէ որևէ հոգային մաս հինգ տարի շարունակ չի ժշակում, չի գործածում, խալիքը—իմամը կամ սրա լիազօրը կարող է այդ կտոր հոգը մի ուրիշ ուայախ յատկացնել, որպէսզի համայնական հոգը իրավան շմնա և հասարակական գանձարանը իւր եկամուտից զգրկի:

4. Երկրամշակը իւր պարարտացրած և գործածած հոգի միայն երեսը արդիւնաբերելու և գրանից օգտւելու իրաւունք ունի, իսկ հոգի մէջ գանւած գանձ կառ հանք դարձեալ պատկանում է իրամի հասարակական գանձարանին (Բէյթ-իւլ-մալ): Հոգի երեսից օգտւելու իրաւունքը ամէն մի հոգագործ կարող է ծախել, փոխել, գրաւ վնել, բաշխել և կտակել: Ում սր յանձնէ հոգի սկզբնական փափկացնողը իւր իրաւունքները, նա այնքան լիազօր ոյժ ունի, որբան նախկին իրաւատէրը և ոչ սր սրա ձեռք բերած իրաւունքը կատակու իշխանութիւն շունի: Հոգի երեսից օգտւելու իրաւունքը ոչ միայն նրան փափկացնելու, մարքելու, մշակելու, պարարտացնելու նախնական աշխատաւթիւնների գնահատումն է, այլ նայնպէս որևէ անհատի իշխանութեան յանձնեած (թէստարիւֆ) լինելու արտօնութիւնն է: Այնպէս որ հոգի մարքող—մշակողը հոգի վրա երկրարդական տէր է համարւում, թէի նա երբէր հոգի սեփականատէրը—կարւածատէրը չի կարող ինել: Համայնական—հասարակական իրաւունքից, յե-

տո, յարկում է, պարարտացնող—մշակող ուայայի իրաւունքը: Խոլամի հոգի վրա երկրագործը, որպէս մրցակող համայնական հոգի, իր իրաւունքի տակ գլուխած հոգի անմիջական տէրն է, սահմանափակ իրաւունքով:

Ենշարժ սեփականութիւն (միւլք) կարելի է համարել միմիայն այն բոլոր հոգերը, որոնց վրա շինութիւն են կառուցած մտսնաւոր անհատները, բազարային կարւածներ, ջրազացրներ, իրենց առուներով, ազբիւրները իրենց խոգավակներով, այգիները ծառասաններով, պարտէվները, բոստանները բազարների կոմ աւանների շուրջը, արմատացած բոյսերով և ջրերով: Այսպիսի կարւածները աւերակ գառնախուց և ամայականուց յետո, գարձեալ Բէյթ-իւլ-մալի (Համայնական սեփականութեան) են վերածւում:

5. Գետութիւնը կառավարելու, ժողովրդի վէճերը քննելու և գատելու, կարգ պահպանելու և շփոթութիւնները խալազացնողը համար Խալիֆ—իմամը պետութեան նահանիները և զաւանները յանձնում է լիազօրների, փոխանորդների, որպէսզի սրանը հարկերն հաւաքեն, հոկեն աղքարնակութեան ընթացքը, զօրքին առաջնորդեն: Այս կուսականները, նահանգապետները կամ գաւառապետները, որպէս խալիֆի կամ իմամի լիազօրներ, իրանց վիճակում բացարձակ իշխանապետ են եղել և վիճակի եկամուտի տէրը: Ամբողջ եօթը զար այս երկրի գաւառները աճուրդով, կամ որոշ սակագնով են տրեել կառավարիչներին, որոնք պարտաւորել են իւրաքանչիւր տարւան համար առանձին նւերներ ել տալ խալիֆին—կամ իմամին,

մանաւանդ նրանց վէզիբներին։ Այս հարկին ու փէշ-քեաշը լրացնելու և իրենց անձնական ծախսերը հոգալու համար, այդ կառավարիչները տարածել են իրենց սպասաւորներն ու զօրականները ժողովուրդի մէջ՝ պիուրերը, սոտացել են նշ միայն օրինական տասանորդը և կառավարչական մասը, այլ կրկնակի ու բառակի են վերցրել պետական հարկը՝ խարաջը, սալեանը՝ Քանի որ կառավարութիւնից կալվարիով—որոշ տարեկան վճարով էին վերցնում գաւառները, ժողովուրդից հաւաքւած բոլոր հարկը ամբողջապէս մանաւմ էր զաւառավեանների կամ նահանգամբառեանների մնդուկը, որոնք այդ մասին, մանաւանդ իրենց աւելածներով հաւաքւած հարկի մասին ոչարի հաշիւ տալու պարտաւոր չէին։ Վերջին XVII—XVIII դարում իսլամի կինտրանեական իշխանութիւնը, Կ. Պոլոսում թէ, Իրանում այնպէս էր թուրացած, որ զրանք շատ զոհ էին, որ ծայրերի նահանգները չէին ապատամբում և զիջում էին տարեկան հարկին ու վէշքեաշը հոսցնել վէզիբների գուռը։ Անիշխանութիւնից խրախուսած զաւառավեանները նշ միայն ժառանգաբար տիրում ու օգտառմ էին իրենց կառավարութեան յանձնած զաւառներից, այլ այդ զաւառների գրա անուանման իշխանաւորի գեր էին բահացնում։ Այս պարագայից օգտելով այդ լիազօր զաւառապեանները, որ միայն խորիթի—կամ իմամի տեղապահներն էին, ժառանգաբար, իրանց իշխան ու տէր էին համարում նրանց յանձնած վիճակներին։

6. Ընդհանրագէս խրամի նւաճած զաւառների կառավարութիւնը յանձնում էին բնիկ-խոլամն ընդու-

նած իշխանների, կամ պատերազմների մէջ բաջութիւնով հաշակւած զօրականներին։ Այս գաւառապետները ոչ միայն ցկեանս իշխանմ էին իրանց կապալով յանձնեած վիճակնեն, ալ սրանց յաջորդում էին իրենց ժառանգները։ Յաջորդութեան ժամանակ ժառանգների մէջ եթէ վէճ էր բարձրանում, յաղթանակը տանում էր բարձր զօրաւորապայնը, թէի ընդհանուր զօրավարները՝ բէզէրբէյնները և վէզիբները յաճախ թոյլերի կողմն էին բռնում, որպէսզի թէ ճնշեն զօրեզին և յէլ մեծ վէշքեաններ կորզեն։ Մինչոյն գտւառի վրամի քանի տառնեակ տարբներով, երբեմն զարսվ իշխան բէզէրբը, խանները մի տեսակ աւատական իշխանի գիրը էին ստանում և սրանց իշխանութեան տակ ապրօգ ժողովուրդը աւելի բէզէրբին ու խաններին, թանթէ խալիֆին ու իմամին էին ծառայում։ Եթէ կենարանեական իշխանութիւնը զօրանում էր, ժողովուրդը բողոքում փոփախել էր տալիս ազան ու գածան գաւառապեաններին, խոկ եթէ խալիֆի իշխանութիւնը թուրանում էր, բէզէրբը ընկճում էին ժողովրդին, հարստանարում, կեզերում և թշւառութեան զագամնակէտին էին հասցնում։ Մինչե անգամ կենարանեական վարչութեան ժողութիւնից օգտելով, այս կառավարիչ բէզէրբն ու խանները իրար գէմ կախ էին մզում, արիւնահեղութիւններ էին կատարում, իրարից վիճակները յափշտակում, իրացնում էին։ Մինչե անգամ կենարանեական իշխանութեան վճարելիիր հարկը, հասոյթը կենարում, տեղ չէին հասցնում։ XVII—XIX դարերում Օսմաննեան պետութիւնը և իրանի շահնշահը անթիւ պատերազմներ են մզել իրենց գերիշխանութեան

Հնապատակով «Դէրէ—Բէյէրի» դէմ և նրանց զսպելու համար երբեմն երբեմն 50—100 հազար զինւորից բաղկացած բանակով մի բանի տարի կորու են մղել, մինչեւ զրանց ընկճելը։ Այս բէյէրը—գտառապետները իրենց տէր էին համարում իրենց կառավարութեանը յանձնեած վիճակի—հօգերին, որոնք իրենց որպէս թոշակ տրւած եկամուտներ՝ հաղերից վերցնելով։ Հոգերի վրայ երբուրդական տիրովի զեր էին կատարում, թէ ոչ մի օրինական հիմունք չունեին այդ իշխանութիւնը իրացնելու։

7. Խալիֆի կառավարութիւնը զինւորական ժառանգութեան սպաներին նրանց թոշակի փոխարէն հըրբովարտակով յանձնում էր պետութեան որիէ զիւղի եկամուտը։ Իհշուլու զինւորական պաշտօնը թէ խալիֆաթում և թէ իրանում ժառանգական էր, նոյնպէս էլ թոշակը ժառանգարար անցնում էր զօրականի ժառանգին։ Սպան բանակում թէ իւր տանը անկողնում պառկած, կուրի գաշտում, թէ օրորոցում, պաշտօնում թէ անպաշտօն, օգտում էր նրան շնորհնած զիւղի հասոյթից։ Սպան իրեն հասանելի թոշակը փոխանակ գաւառապետի միջոցով ստանալու, ինքն անձամբ մտնում էր իւր թոշակին յատկացւած զիւղը և այնտեղ աղմինիստրատորի—գտառապետի օգնականի պաշտօնի էր ստանձնում։ Սովորաբար ուժեղ գտառապետները կարսպանում էին այսպիսի սպաներից բաժ առնել, իսկ զօրեղ սպաները գտառապետի ռեխին էլ չէին մտիկ տալիս։ Ամէն մի գտառապետի իշխանութեան յանձնեած 50—200 զիւղերից մեծազին մասը հետզհետէ անցնելով զօրականների ձեռքը

նրանց թոշակի հաշվին, գաւառապետների իշխանութիւնը իրենց բնակած բաղարի, բերդի կամ աւանի պարսպից գտարու չէր տարածւում։ Թէի գաւառական խաներին, թէգերին ու ազալարներին պարտաւոր էին այս սպաները հնագանդելու, նրանց հրամանները գործադրելու, բայց զիւղական հասոյթից օգտուզ սպառագիտ այնպիսի զիր էր նկատում։ Թոշակառու սպաները այնպէս էին կապւում իրենց հասոյթի ազբիւր զիւղերի հետ, հոգակործը այնպէս էր ընտելանում իւր պարարտացրած ու շաղացրած յավակների հետ, որ սրանը փախակարձարար իրար շահերն էին պաշտպանում։ Թոշակառու սպան իրեն եկամուտի աղբիւրները ապահովելու համար զիւղն ու զիւղացուն պահպանում էր ստնձնութիւններից, աւարառուներից, աւազակներից, նոյն իսկ կառավարչական ու կղերական պաշտօնակալներին սանձահարում էին։ Ո՛չ միայն միւսիման անհատը, այլ նոյն իսկ գաշտները չէին կարող յանցկնիլ ու նեղել, կեղերել ու հարստահարել որիէ շինականի, որը գտնուում էր այսպիսի զօրականի հոգանու տակ։ Հասոյթառու սպաները աներկիւզ կրկնում էին։ —«Նա իմ զեավուրս է, ոչ որ իրաւունք չունի նրան ճնշելու»։ Գիւղական հասոյթից օգտուզները ընդհանրապէս ենիշէրական զիւղի սպաներն էին, զօրականներն էին, որոնց ժողովուրզը կանչում էր Խափահի-աղասի, կամ աղա-աղալարներ։ Սրանը էլ հոգի երեսից օգտուզ շորորդական իրաւունքները էին։

8. Խոփահի-աղալարները բուն դնելով զիւղերը,

մի տեսակ տէր էլ սրանք էին գառնում, այնպէս որ՝ զիւզի հոգի երեսից օգտուզ ժողովուրդի հասոյթի զիւսաւը մասը սրանք էին կլանում։ Արքան երկար էր տեսւմ այս իսփահի—ազաների և սրանց ժառանգների իշխանութիւնը, այնքան գառնահում էր չինականի վիճակը։ Մանաւանդ աղամի հիմնդատասր որդիների ու թօռների իրար զէմ ունեցած հակառակութիւնների ընթացրում։ Ամէն մէկը զալիս բաժ էր պահանջում և ժողովուրդը բոլորին էլ բաւծանելու պարուաւոր էր։ Իսփահի-ազարաների հարստանարութիւնների և կեղերումների տակ հեծող ժողովուրդի ձայնը յաճախ հասնում էր Կ. Պօլիս և յուզում էր շատերի սիրտը։ Ժառանգական գաւառական իշխանների, մանաւանդ ժառանգաբար զիւզերի հասոյթներից օգտուզ իսփահի—ազարաների իրաւունքները չնշելու և սրանց ձեռքից գաւառներն ու զիւզերը ետ առնելու համար, XVII և XVIII դարերում ենիշէրիները մի քանի անգամ իրենց պղինձները զուրս են բերել Կ. Պօլսում Եթ-Մէլգանի գօրանոցներից, հրամաբայներում կանգնել իրենց չորբան եփերու, ապստամբել են վեզիրի, խալիֆի զէմ և պահանջել են թշւառ հողագործին փրկել ձրիակեր Իսփահի—ազարաների և գաւառակուր բէգերի ճիրաներից, ճշմարիտ է, այդ կեզերիշներին բռնել, կախել, մորթել կամ փախցրել են իրանց վիճակներից, բայց ենիշէրական զնդերից նշանակած նորանոր Իսփահի-ազաները մի տամնեակ տարի գաւառների եկամուտները լավելու վարժուց յետո, էլ սոսկուի վամբիրներ են զարձել ժողովուրդի արիւնն են ծծել։

9. Իսլամի օրինքով պետական—համայնական հոգի երեսից օգտուելու անմիջական իրաւունքը ուժանշպարինն է, որի արտօնութիւնը ոչ մի աշխարհային ոյժ բռնաբարելու հնարաւորութիւն չպիտի ունինա։ Ինչպէս հոգագործը տէր ու իշխանաւոր էր իւր մշակած—փափկացրած հողին, նոյնպէս զաւառապետը և իսփահի—աղան տէր էին հոգագործից ոտացւած հասոյթին։ Ինչպէս զիւզերին իւր պարարտցրած ու փափկացրած հողը կարող էր ծախել, փոխել, զրաւ զնել, նւիրել ու կտակել, զաւառապետ-բէգը լուներ, զիւզից թոշակ ստացակ հասոյթատէրը կարող էին իրենց հասանելի եկամուտը հասոյթը և սրանց անընդհատ շարունակելի իրաւունքները ծախել, փոխել, զրաւ զնել, նւիրել, ուժ որ կամնեային։ Ուժ որ յանձնեէր, փոխանցնէր այդ իրաւունքը, նաև դասնում էր նոյն զաւառի պետ, կամ նոյն զիւզի աղան, ազմինիստրացիայի լիազօրը, ներիայացուցիչը։ Աւատական-վառական իշխանութիւն չկար իսլամի երկրներում, բայց գօրեղ գաւառապետները, մանաւանդ թուլացած խալիֆների օրով անսահման իշխանութիւն էին բանացնում իրենց վիճակում, ոչ միայն իրացնում էին համայնական գանձարանին հասանելի հարկերը, ոչ միայն զուրս էին շպրտում իրենց սահմանից թոշակառու Իսփահի—ազարաներին, այլ շրջակա մանր բէգերին էլ յաղթահարում, ճեշում, նրանցից պետական—համայնական գանձարանին հասանելի բաժն էին խրլում, կամ ուղղակի գաւառապետ-բէգերից ու խաներից խլում էին նրանց վիճակը։ Բաղդադի ամիրապետութեան վերջին շրջանից յետո, երբ իսլամական իշ-

իանութիւնը բաժան-բաժան գարձաւ, երբ իրար զիմ
թշնամական զիրը բանեցին Սէլչուկների, Մէլուկնե-
րի, Օսմանեանների, Սէֆէվների, Ղաջարների իշ-
խանները, Արևմտեան-Սոփայի—Պարսկաստան, Միջա-
գետք, Սոսրիր, Կիլիկիա, Հայաստան, Կովկաս Փոքր-
Սոփա—իոլամ փարբիկ իշխանաւորների մէջ անվերջ
շարունակւեց տյապիսի ներքին կոփէներ, սրոնք պար-
բերարար և փախաղարձաբար իրարից յափշտակում
էին զիւղեր, գաւառներ, գաշտեր ու ձորեր և ովայ-
նում էին հաղագործ ժողովուրդին: Բարեբազգարար
այս աւերածութիւնների պատմութեան մհծագոյն ժա-
մար, հորհիւ տիրող անսահման տգիտութեան ու խա-
ւարին, համարեա թէ հետք չին թողել ազգերի պատ-
մութեան էջերում:

10. Թէի զուրանի և էօմէրի տւած հագիւնների
համաձայն գաւառների կտորագրութիւնը և զիւղերի
հասոյթների զանձումը պիտի կտարարի հաստատա-
հաւատ իոլամ պաշտօնեայի ձեռքով, բայց նորանւած
և հետաւոր նահանգները բոլորովին ընկճելու, հաղա-
տակիցնելու և նեւաճելու նպատակով՝ յաճախ յանձնում
էին նոյնպէս բրիստոնեա կտորագրիչների, սրոնք ընդ-
հանրապէս աւելի հաւատարիմ էին ծառայում իոլամի
պետական շահերին, քանի է օրական հինգ անգամ
չերմեռանգութեամբ աղօթող օտարերկրացի միւսլի-
մանները: Յաճախ տյապիսի իշխանաւորները մսունում
էին իրենց կրօնն ու ազգը, իրենց իշխանութիւնից
շգրկւելու համար և ստիպում էին իրենց ցեղակիցնե-
րին արանալ ազգային սրբութիւնները և ձուլել իո-
լամութեան հետ: Օսմանեանները, Հունգարիան, Տր-

բանալիվանիան, Թումբինիան, Բոսնիան, Սերբիան,
Խմլիտիան միշտ կտորագրել են բրիստոնեա իշխա-
նութիւններով: Պարսիկները Վրաստանի, Ղարաբաղի
կառավարութիւնը երկար գարերով ժողել էին իրենց
քնիկ իշխանաւորների ձեռքը լիազօրական, բայց ոչ
իշխանական արտօնութիւններով:

11. Իոլամի ազմինիստրատորները ազբարային նոր
օրէնսդրութիւններ չեն խմբագրել, չեն Տրատարակել,
նրանք շարունակել են էօմէրի, Օսմանի ժամանակ
առհմանւած կարգերը, սրոնք իոլամից առաջ Արեմբ-
տեան-Սոփայում գոյութիւն ունեցող սովորութիւններից անրան էլ չէին տարբիրում: Իոլամն ընդու-
նած ժողովուրդը թէի էօմէրի սահմանագրութեան
համաձայն բացի զիւնորակում զործերից ուրիշ զրագ-
ումներ ունենալու արտօնութիւն չունի, բայց բանու-
թեան, կեղերումների և հակառակութիւնների ստո-
կացած շրջաններում, երբ ամբողջ զիւղեր ու գաւա-
ներ թողնում էին իրենց հետանդ կրօնն ու ազգը,
գաւահում էին իոլամը, մնում էին կողած իրենց հո-
գին և շարունակում հայրերից աւանդւած ունչզա-
րութիւնը: Եթէ սրոնք զութանի ու արօրի մաճը
բաց թողնէին, պիտի իոլառ սավամուն կորչէին: Իո-
լամ հաղագործը ոչ-իոլամ երկրագործից այնքան էլ
զանազանութիւն չունէր, սրու իրաւունքի տակ գանը-
ւած հողն էլ պետական—համայնական էր, սա էլ
բերբից տասանորդ ու վարձագին պիտի տար, սրա
էլ անհասունները արօտում պիտի համբւէր և հարկը
ստացւէր: Միայն իոլամն ընդունած հաղագործը իո-
լարաջ չէր տալ, իոր կեանը ամէն տարի գնելու պար-

տաւորւած չէր բրիստոնելի նման։ Նոյնպէս Սալիսն և
աւելորդ հարկիրից զերծ էր խորածն ընդունած շինա-
կանը, նա թէգերին խաներին և աղալարներին համար-
ձակ դիմադրում և չէրխական իրաւոնքներով սահման-
ած հարկից աւելի չէր տալիս, ինչպէս խում էին
իրենց գրացի նշ-մուսուլմաններից։

12. Մուսական տիրապետութիւններից առաջ դա-
ւառապետ խաները կամ թէգերն էին կառավորում ամ-
րող Կովկասոր, որոնց իշխանութեան յանձնած գաւա-
ռի գիւղերի եկամուտը յատուկ հրօվարտավներով տր-
ւած էր զանազան սպաների, խաների, որոնք օգտագու-
յին գիւղերից իրանց վարչութեան—թոշակի փոխա-
րէն։ Դարաբաղի Մէլիքները, Գանձակի, Երեանի, Նախի-
չանի, Օրդուրակի խաները, թէգերը, Ալալցիսայի,
Ըստարալարի աղալարները, նայն խոկ Իմերէթի Գու-
րիայի և Կախոէթի Թաւադները, Գազուտանի և Լէզգինե-
րի չէյխերը այսպիսի լիազօր գաւառապետ իշխաններ
էին իրենց վիճակում Շահնշահից կամ Խալիֆից հա-
տառած։ Այս գաւառապետները անձամբ կամ լիա-
զօրների և կամ թոշակուու սպաների—խաների ձեռ-
որդ կառավարում էին գաւառները, հաւարում էին
հարկն ու բաժը, բերքն ու բարին հասցեում էին
Պարսկական, կամ Օսմանեան զուոը։ Զատ անգամ
շտհը կամ խալիֆը համայնական գանձարանին հա-
սանելի հարկն ու բաժը յատուկ հրօվարտավներով
յանձնում էին Կովկասի սահմաններին մօտ ապրոց
բանակների հրամանատար սարդարներին, կամ փաշա-
ներին, որպէսզի սրանը կերակրեն բանակները, վարեն
պատերազմները, զապեն ապստամբ Դէբէ-թէյերին,

սրսնը չէին հպատակւում համիսլամական կենտրոնա-
կան իշխանութեան և կամ չէին յանձնում հասարա-
կական գանձարանին նրա հասանելի հասոյթները։

13. Տասնեւութերորդ գարի վիրջերը, երբ Ղարա-
բարի Մէլիքները, Վրաստանի իշխանները ընդուած
զիացին և Մուսական բանակը Կովկասան լիոններից
անցկացրին, իրենց անձեաւութիւնները իրենց գի-
րահոկութեանը և կառավարութեանը յանձնւած վի-
ճակիների աւատական իշխանն ու տէրը հրատարակե-
ցին։ Մուսական զօրականները, որոնք իրենց յաջո-
գութիւնները պարտական էին այս թէգերին, մէլիք-
ներին և իշխաններին, ուրիշ կերպ չէին կարող երե-
ւակայել, չէին ուզում հասկանալ։ Ամբողջ Մուսաստա-
նը բաժանւած էր կարածատէր կնիազների ու դժո-
րեանների մէջ (ՊՈՎԵՌԱԿԵ), որոնք անսահման տէր
ու իշխանաւոր էին իրենց սեփական հսկերի։ Կովկա-
սոր նւաճող զօրականները այդպէս էլ համոզւած էին,
որը պարսկական և թուրքական խանները, թէգերը, ա-
ղալարները կամ չէյխերը իրենց կառավարութեանը
յանձնւած սահմանների անսահման տէրն ու իշխանա-
ւորներին են։ Կամ ամէն մի գիւղում բնկլած աղան,
խանը այդ գիւղի սեփականատէրն էր, բանի որ նա
օգտագում էր գիւղի հասոյթից բարձրագոյն հրաբ-
որտակներով։ Հետեւելով խոլամական կենտրոնական
վարչութեան, Մուսաներն էլ նւաճած երկրի ագմինիստ-
րացին ստորին պաշտօնները յանձնեցին այդ բր-
իստանեած և միւսլիման խաներին, թէգերին ու աղա-
լարներին, որպէսզի խոպառ հպատակիցնեն, խոնար-
հեցնեն և հնազանդեցնեն ազգարնակութիւնը։ Այս

պաշտօնական բնիկ խաները, բէգերը և աղալարները հետամտելով յազմեազների օրէնքներին, աւելի շուտ խրացրին Ռուսական կարգերը, սովորութիւնները, փարքն ու բարրը, աշխատեցան օգուտ քաղել պարագաներից և սեփականել իրենց վիճակի հոգերը, բանթէ Ռուսները կարողացան ուսումնասիրել տեղացն պայմանները, ՊԵՏԱԿԱՆԱՅՆԵԼ նամած հոգերը:

14. Կովկասեան գաւառների կառավարիչ խաների, բէգերի և աղալարների տեղադանիրին աւելի նպատեց այն հանգամաները, որ Ռուսական գօրականները՝ Մատակով, Թօգէն և ուրիշները ամեն տեսակ ստոր միջոցի վիմեցին, որպէսզի գրաւեն, իւրացնեն կամ զնեն Կովկասում զանազան զիւգեր, Թէի այս վաճառումների շրջանում վէճերն ու հակառակութիւնները անպակաս էին, բայց մեծամեծները սուտ խուլ, կոյր էին ձեանում, չէին թողիում, որ կառավարութիւնը սթափւի: Ռուսական աղմինիստրատորները ամեն ձնշում գործ էին գնում ժաղովրդի ձայնը խեզգելու, նրանց բողոքները ոչնչացնելու համար, Պատկեհիչ Պարս-Թըրքական պատերազմներից յետո, այսպիսի վէճերին վերջ տալու համար, յատուկ, մասնախօմքեր քննիցին Կովկասի գաւառների հոգային խնդիրները և քառասնական թւականներին կարածագրեր (ԷԿՈՎԱՐ-ԷՐԵ-ՊՈԾԻ) տրեցան նախկին գաւառավեաներին, կամ թօշակառու սպաների յաջորդներին: Այսպէսով Կովկասի համայնական—հասարակական հոգերը գարձան մասնաւոր—կարածատիրական և ժողովուրդն էլ այդ կարածատէրների ճորտը: Փոխարքան Վարահցովի բառամատական թւականներին այնպիսի հոգերը:

Հրատարակել աւեց, որ Կովկասի խաները, բէգերը, աղալարները կատարելապէս հաւասարեցան Ռուսական կալւածատէրներին (ԱՕՄԵԱԿԻՔ) և ժողովուրդը Ռուս մուժիկի նման այդ խաների, բէգերի ճորտը դարձան: Այդ օրւանից Կովկասի բէգերի սեփականացրած—յափառակած դիւցներն ու անտառները իրանց սրբադան և անձեռնմխելի իրաւունքները հրատարակւեցան, նըրանք էլ ժառանդաբար Ռուսական կեեազների, գըրաֆիների և զվօրեանիների դամի անցան: Այս յափչականիչների իրաւունքներն է, որ այսօր ձգտում են անձեռնմխելի պահպանել:

15. Իսլամական այն գաւառավեանները, որոնք պատերազմների ընթացրում կամ յետո երկրիմի զեր խաղալու ընկունակութիւնն և նենգամտութիւնն չունենալու պատճառով փախել, հեռացել էին իրենց վիճակից, կամ ըննւել սպանուել էին, կամ այն զիւգերը, որոնք մասնաւոր անհատների չեին տրւած, դրանք բոլորն էլ զրաւեց Ռուսական կառավարութիւնը և յանձնւեցան պետական կարածագործների մինիստրութեան, իսկ այս հոգերի վրա ապրող ժողովուրդին էլ անւանեցին—պետական երկրագործներ, կամ աւելի լաւ է—պետական ճորտեր: Այս հոգերը կառավարչական մասնավոր անհատանը կարձաւ, սրանց առաջորդների անսպառ զանձարանների տնկարտելի իրացից օգտելը այդ պաշտօնական գաղաքարչական ազաւունքը համարեցաւ: Չնորհիւ կառավարչական ազաւունքը համարեցան աշառութեանը, սուտ և կաշառապաշտօնականների աշառութեանը, առ և աւագանական գործադրութիւններին, առ և աւագանական գործադրութիւններին, անտառներ, զիւգեր մասնաւածներից ազարակեներ, անտառներ, զիւգեր մասնաւորում, անհատական սեփականութիւնն էին զառնում:

Պեղծ վկաները ծաղրելով ամենայն սրբութիւն, մատները բարձրացնում էին երգւելու, զգալով որ դատաւրիներն արգիշ համոզւած էին, որ իրենք արհամարհում էին այդ ծիսակատարութիւնը և կեղծում էին, սրպէսդի օրէնքի պահնչացած ձետականութիւնը կատարելով, յափշտակութիւնը սրբազնութեն և իրենց բաժը ստանան: Օրէցօք հանարակական—համայնական հոգերը մատնաւորացնում, անհատական սեփականութիւն էին դարձնում, տարէցտարի ծանրանում էր հաղագործի վիճակը—վճարած հարկը:

16. Մուռների տիրապետութիւնից յետո, հաղագործին այնպիսի անտանելի վիճակի էին ենթարկել հոգերի վրա գերիշխող խաները, բէգերը և աղալարները, որ համբերութեան բաժակը լցւել էր, այլու անհնարի տոկալ: Ամէն տեղ, խլամ թէ բրիտոնիա հոգագործը անտանապահ, այլու դիմանալու հարաւորութիւն չունենալով, կոտոռները դէմ տւին իրենց կեղծ—կարւածատէրներին: Ո՛չ մի յորդոր, ոչ մի խրատ, ոչ սպառնալիք և ոչ խստմունք նրանք էլ չէին լուսում, պահնչանցում էին վերականգնել իրենց գարենը իրաւունքները, համայնականացնել հոգը: Կառավարչական մտրակն ու խրագանք չկարսպացաւ ստրկացնել Կովկասի գարենը ազատ հաղագործին, անհրաժեշտ էր զիջել և կարիք եղաւ խիստ բնեութեան: Որքան որ Վարանցովը տենչում էր Մուռական կարւածատիրական սխատեմը կամ անզիւժական մայօրասու ներմուծել Կովկասում և ոչխարների հօտեր կազմել Կովկասի լիոների լանջերին ապրուզ տար զլուխ ժողովուրդից, հեար շգառաւ: Գործն այնակ

հասաւ, որ կենտրոնական վարչութիւնը խիստ ըննութիւն նշանակեց, որ իրերը թիւնելի, պարզւի և բաւարարութիւն տրուի բմբաստ շնչականին:

17. Մինչ Կովկասի ազմինիստրացիան ստիպում էր Կովկասի հողագործին նորտանալ խաներին, բէգերին ու աղալարներին, հարկան թուրբիալի նահանգներում ուստական բազարականութեան ներհակ կարգեր էին դրում: Ենիշերիներին կոտորելուց յետո, Օսմանեան կառավարութիւնը սկսեց վերանորոգութիւններ կատարել և երկրի կառավարութիւնը կենտրոնացնել: Գաղաների (գաւառ) նախկին ժառանգական բէգերի—աղալարների փոխարէն զայմազամներ, մէւտիրներ նշանակեցան, պաշտօնականների և զօրականների թոշակները սկսեցին պետական գանձարանից վճարել: Գետական հարկերը, գիւղերի տասնորդական և ուրիշ տուրբերը ազմինիստրացիան անուրդով վաճառականներին կապալով էր տալիս և գրամները յանձնում էր. Գետական գանձարանը: Ըէօրազեալի Մագաթ-բէգից, Արգահանի Գիւղում-օվլուց, Աջարայի Ահմէդ բէգից, Օլթիի Քոռ-Հիւսէլին բէգից, Խօսպ-բէգից և ուրիշ բէգերից խեցին գաւառները, երկրագործը ազատուց խնամակալ աղաներից ու բէգերից, սկսեց օրինական հարկը յանձնել գանձարանին, բերքի տասնորդականը (աշար) կապալառուին:

Կառավարութիւնը այդ բէգերին պաշտօնների զըրեց և նրանց թոշակին յատկացրած գիւղերի արդիւնքը ինքը գանձելով, ինքն էլ նրանց ոռնիկներ սահմանեց, որոնք վճարում էին զանձարանից: «Դէքէջէները» տպատամբեցան, չէին անձնատուր լինում,

կառավարութիւնը գրանց զսպեց և յամառներին շարաշար պատժեց: Օլթեցի Քոռ-Հիոնէն-բէզը ամրացաւ Կարնավասի բերդում և մի քանի տարի գիմադրեց Օսմանեան բանակին: Բայց Բարձր-Հայրի առաջնորդ Յովհաննէս Եպիսկոպոս Սէլիմեանը եկաւ, բանակցեց նրա հետ, տարաւ էրզուրում, որտեղ կախիցին ապօտամբին և ժողովուրդին ազատեցին ինքնակոչ բէզից: Վահի և Տիգրանակերտի մէջ զտնւած լիռներում թագաւորող Բէզիր-խան-բէզ գէրէբէյին բանեց վաստօրականի առաջնորդ Պոլոս հալիսկոպոսը և յանձնեց թուրքերին, որոնք այս բռնակալին իւր արիւնակիցներով Կ. Պօլիս փոխազրեցին, որտեղ ապօտամբը կտխւեցաւ: Թուրքիայում զտնւած կօնսուլներին ու գիսպանը այս բոլորը մանրամասն զեկուցանում էին ինչպէս Պետրոսը կենտրոնական կտուֆարութեան, նոյնպէս Կովկասի փոխազրային, որից պարզեց, թէ ի՞նչ իրաւունքների տէր էին եղել իրենց վասալ, կում սեփականատէր ենթադրած խաները, բէզերը և ազալարները:

18. Քննաւթիւններից պարզեց, որ խաները, բէզերը, աղալարները երբէք չեն եղել նրանց յանձնւած հոգերի սեփականատէրները, որ երկիրը ամրողապէս համայնքի, հասարակութեան սեփականութիւնն է եղել, ոչ մի կտոր մասնական չէ եղել և երբէք էլ չի կարող լինել: Որ այդ խոնարը, բէզերը և ազալարները նախուկին խոլամ կտուֆարութիւնների աղմինիսուրացիական պաշտօնականներին են եղել, որոնց առնիկ փոխարէն, թօշակի հաշվին յանձնւած է եղել այդ կտուֆարչական հարկերը և նրանց իրենց խորաման-

կութեամբ խարել են ոռոսական աղմինիսուրացիային: Քանի որ Ծուս կտուֆարութիւնը այս այդ խաներին և բէզերին չէր յանձնելու գաւառների կտուֆարութիւնը, բանի որ զրանց ծառայութեան պէտք չուներ Ծուս աղմինիսուրացիան, հետհապէս զրանց վարձատրելու էլ պարտաւորւած չէր:

19. Բայց արգէն ուշ էր: Կառավարութիւնը կալւածագրեր էր չնորհել բոլոր հոգերի համար և շատ հոգեր արգէն մի բանի անզամ ծախւել, փոխանցուել էր պետական հիմնարկութիւնների վաւերացումներով: Ջատերն էլ զրաւ էլին զրաւած զանազան բանկերում և զանձարանում: Դրութիւնն այնպէս էր, որ պէտք էր պետական ծառայողներին բարքին դատաստանի յանձնել, կալւածագրերն էլ զանձարանից վճարելով գնել, կամ հողագործին ճօրտացնել այդ նենզամիտ խաներին, բէզերին և աղալարներին: Հարցն այնպէս խնճած էր, որ մոլորւել էին շինունիկները, զդիտէին, թէ ինչ ընթացը տային գործին: Մանաւանդ որ այդ ժամանակները շինունիկների ուղեղը ուելի կաշկանդւած էր Ծուսական օրէնսդրութեան զանազան յօլւածներով, այդուեղ այնափոխ տափակ ցանցեր էր զիզել Ծուսական աղնւականութեան կալւածատիրական կարգերն ու սովորութիւնները, որ նրանք չէին կարսդանում հաշաւել այն մորի հետ, թէ Պարսկական թօշարական խաներն ու բէզերը իրաւունք չունենին պետական հոգերին, տիրելու կամ այդ հոգի վրա ապրող ժողովրդին ստրկացնելու: Ինչպէս կարող էր աղնաւականութիւնը իսլամի երկրում սեփականազուրկ լինել և ճօրտերին չհամարյել: Տասնեակ հազարաւոր ճօրտե-

րի տէր ոլօմէշչիկ չինովնիկները, որոնք անկախ իրենց ստրուկներին հարիւրներով ծախում, բաշխում, կամ տասնեակ գեղջկուհի կոյսեր մի որոկանի, մի ձիռ, մի կովի կամ մի հրացանի հատ փոխում էին, չին կարողանում համոզւել, թէ արեկլրցի խամ խաներն ու բէգերը չէին օգտառմ համանման արտօնութիւններով։ Զէին կարող երեակայել, որ Գուրանը չեցիլ է ծագումը, մարդկի խոյամի երկրում հաւասար են, բէգութիւն, խանութիւն միայն «Թէրէ-Բէյերին» է յատկացրւած։ որոնց հայածում են ազատութեան հատերդիները։

20. Թուսական պետական մեխանիզմը չբայրացրւ համար, չինովնիկները անհրաժեշտ համարեցին ջրնեցել մի բանի միլիոն Կովկասցու ազատութիւնը, անկախութիւնը, Կովկասեան համայնական, հասարակական հողերը բէգերին յատկացնել և որանց այդ հողերի վրա ունեցած իրաւունքը սրբազործել անհատական սեփականութեան անձեռնմխելիութեան գրոշմով։ Այս նպատակին համեմու համար չինովնիկներին նպաստեց Թուսական տասնամեա ժամանցի (ՃԵՐԻԼԵՒՆԻ լավություն) օրէնքը, որը լրացրեց պակասորդը, քանդեցին գարեար սովորութիւնը և իրաւունքը, արեկլրցի խաները, բէգերը և ազալարները իրենց յափշտակած հոգերով նենպամտութեան գափնիներով պատկւած, արժանացան մտնելու Թուսական ազնւականութեան հօրդան, զատեցան կիսեազների, զրաֆների և գորեանիների շարքը։

21. Ճշմարիտ է այս բոլոր ձեականութիւններով շկարողացան Կովկասի անկախ ընթիկներին ստրկացնել

ուսուական ժողովրդի նման, թուրքին ու հային կրեպոստները (ստրուկների), ցանկը շկարողացան մտցնել, բէգերին ու խաները շկարողացան ուսուական պոմեշչիկների նման անսահման իրաւունքներով տիրել յափշտակած կարածներին, մասամբ սահմանափակւեցան այս խաների ու բէգերի իրաւունքները, բայց և այնպէս հոգագործին պարտաւորացրին իւր աշխատանքով արգիւնաբերածի երբորդ մասով կերակրել այս ձրիտեկերներին։ Ահա մօտ մի զար է, որ Կովկասի ազգարնակութիւնը անշափ զրկանքի, տանջանքի է մտանելած չեսրհիւ այդ խաների, բէգերի և աղալարների նենպամտութեան, ուսւ աղմինիստրացիայի տղիտութեան, կաշառակերութեան, մանաւանդ քաղաքականութեան։

22. Թուսական ճորտերի ազատութիւնից և նորոգուգութիւններից յետո, վաթուունական թւականների ազատ շարժումների շրջանում Կովկասեան հոգատիրական կեղծումները այնքան լուրջ քննութեան առարկա էր գարձել, Պետական բարձրագոյն շրջաններում այնպէս էին իրացրել Խոլամի շերիական հոգային օրէնսդրութիւնները, որ 1878 թւականին, երբ Պարսի և Բաթումի նահանգները մտան Թուսական գրոշակի տակ, կենատրոնական վարչութեան խիստ կարգպատճիւնների համաձայն, աղմինիստրացիան նահանգների հոգերը անմիջապէս, տանց որիէ բացառութեան Պետական հրատարակեց և բարոր բողները անհետեանը թօղեց։ Ճեսրհիւ այս կարգութեան Կարսի Բաթումի հոգերը ազատութեան ինքանու բէգերի կամայականութիւններից և ժողովուրդը

շստիպւեցաւ ձրիակերներին կերակրելու։ Միայն Կովկասում այս երկու նահանգները բացառութիւն են կազմում, ուր չկա հօգատիրութիւն, որի հոգերը բաժանւած են համայնքին և կառավարութիւնն է ստանում որոշած սովորկի հոգային հարկերը։

23. Թանգիմաժից յետո թուրբիայի ժողովուրդը, հոգագործը բազմաթիւ բոլոր էր ներկայացնում Օսմանեան Բ. Դուան, թէ խոփահի ազաների և բէգերի ժառանգները, ազգականները իւրացրել են գիւղերի ընտիր արտերը, մարզերը, արօտները, անտառները և ուանչպարի ձեռքից յափշտակել են իրենց փափկացրած յարմարեցրած հողերը։ Կամ այդ նախկին բէզերի ու խոփահի ազաների յաջարգները կամայականութիւններ են կատարում, զրկում են ռանչպարին, զանազան ապօբինի զանգատներուն նեղում, ձկուում են հոգից զըրկել։ Չատ անգամ էլ գիւղերի սահմանների և գիւղական համայնքի ներքին սահմանների մասին բոլորներ էին հասցեւում կենտրոնական կառավարութեան և բաւարարութիւնն էին պահանջում։ Կառավարութիւնը այս բոլորների տէրերին զոհացում տալու համար մտսնաւոր մի կօմիսսիա նշանակեց, որի ձիւղերը տարածւնցան ամեն մի վիլայէթում, սանջարուն և գաղէում, որոյնսկի սրանը ըննեն բոլոր գիւղերի սահմանները և ամէն մի գիւղական համայնքի հոգերի ներքին բաժանմունքը։ Մրանք կազմեցին ամբողջ ամսագույն տարածութեան գիւղերի, ամարանոցների, ձմերանոցների, ադարակների և գիւղացիների արտերի ու արօտների ցուցակը իրենց սահմաններով։ Այս ցուցակով Օսմանեան կառավարութիւնը սննցաւ իր մուտքի—եկամուտի մանրա-

մասն հաշիւը, ելիմուտքի նախարարութիւնը ունեցաւ իր յատակ եկամուտք և կառավարութեան սնկումը ահագին փող մտաւ։ Օսմանեան կառավարութեան հոգային այս կօմիսսիաները հոգագործից պահանջեցին և տռան այն բոլոր փաստաթղթերը, որոնցով երկրագործութիւնը էր ձեռք բերել և գրանց փոխարէն ստացականներ տալով սովարկեցին Կ. Պոլիս։ Պետական ազատ հոգերի երեսից օգտւելու իրաւունքը հասարակութեան մաս մայնձնեցին և դրա արժէրն էլ գանձարան մտաւ, որով պետաթիւնը, թէ փող շահեցաւ, թէ հոգերը մշակելով եկամուտի ազբիւրն աւելացաւ։ Այս կօմիսսիաների կարգագրութիւնների և զեկուցումների համաձայն կենտրոնական Կ. Պոլսի կօմիսսիայից հոգագործին Թուրալու-թափուններ (պետական դրշմով կարւածազբեր) տրեցան, որոնք նշ միայն արձանագրւած են կենտրոնական պետական տամարներում, նշ միայն սրանց պատճէնները այնուհետ պահպանում, միշտ կարենը գէպրում կարող են նորանոր պատճէններ տալ, այլ այնուհետ պահպանում են և նին փաստաթղթերը որոնցով կարելի է վերջ տալ բոլոր զանգատներին։ Այս թափունները նշ միայն հաստատում էին հոգագործի անկապտելի իրաւունքները, այլ հոգագործը այս փաստաթղթով հետարարութիւն էր ստանում նշ միայն իւր հոգերի երեսի մշակութիւնից օգտւելու, այլ նաև ննաւանդ սովորութիւնների համաձայն այդ թղթով կարսղ էր իւր իրաւունքը ծախսել, փոխել, զրաւ զնել, և բաշխել, յայտնի բան է միշտ երեսից օգտւելու, արտօնութեամբ։ Կամ հոգը յարմարեցնելու, փափկացնելու իւ-

բաւուներով: 1860 թ. սկսած ամբողջ պետութեան երկրածակին թօւրալի թափուներ տրւեցան, որոնք ծախելու, փոխելու գէպրում կարող են նորոգւել դարձեալ միայն Կ. Պոլսի հոգային կենտրոնական կօմիսիայի ձեռքով:

24. 1878 թւականին, Կարսի նահանգը Ռուսական գրոշակի տակ մտնելուց յիսո, երբ Խոլամի մոզավարդը սկսեց գաղթել Խոլամական հոգերը, դադարովները ուղեցին Թօւրալի—թափուներով ունեցած իրաւուները ծախել: Ռուսական ազմինիստրացիան արգելր զրեց, չժօղեց որ ժամնաւոր անհատ կարողանա զնել այդ հոգերը, առարկելով որ հոգերը պետական են, ինչպէս որ գրաշնած էր Օսմանեան կէնտրոնական հոգային կօմիսիայից բաժանւած թափուների վրա: Ամէն մի թափուի ճակատին զրօշնած թօւրախ տակ զբան է—Երազի-Ամիրէ (Գետական հոգ): Գաղթովները բողործեցին և պահանջեցին այդ հոգի երեսից օգտւելու իրաւուները, որը նրանց տրրւած էր հոգի փափկացնելու և յարմարեցնելու համար: Եյս գանգատները յարգւեցան, ստացան ու գաղթեցին: Մնացալները պահպանեցին իրենց իրաւուները, այսինքն հոգի երեսից օգտւելու արտօնութիւնը այն պայմանում, որ իրաւունք չունին այդ արտօնութիւնը ծախելու, փոխելու, զրաւ զնելու կամ նուրիւու: Եթէ հոգագործք թօվնում է զիւզը և փոխադրում է բարեկարգ կամ այն բէզին ու աղային հող չնորհելու համար: Ըստ օրինի այս նահանգների հոգը Պետական հաստարակական է հրատարակւած: 1884 թ. չուտեմբերի 26 կայսերական հրաժարակավ արգելւած է սրիէ, անհատի, կամ հիմնարկութեան հոգերը հաստատել, ծախել, կամ զրաւ ընդունել: Բայց և այնպէս զուրենաւոր Տոմիչը կարողացաւ թագաւոր կայսրին մի հրովարտակ ստորագրել տալ, բուրդ էօմէր աղային չորս հարիւր զենեատին հող չնորհելու Աղ-զոմ զիւզում, Կարսի գտառում, մասնաւոր սեփականութեան արտօնութիւններով: Սա մի շար և վարակիչ օրինակ է, որը հրապարել է Կարսի նահանգի նախկին թէզերի ձիւտեկեր թոռներին և բաղացի զրամատէրներին, որի առաջն առնելու է խիստ օրէնսդրական սրտումով: Արգահանցի Գիւլում-Օդի

կասի միւս նահանգների իրենց պապերի զառակից թէզերի, խաների և աղալարների բազզին արժանահանալ, հոգատէր զառնալ, ճեշել հոգագործին և ձրիակերութեամբ կեանք զարել, զեռ մինչեւ այսօր—ահա երեսան տարի է—շարունակում են իրենց ահաելի բոզորներով կառավարչական պաշտօնակայիներին ձանձրացնել իրենց պարբերական խնդրագրերով, որոնք անվերջ մերժել են:

25. Պէտք է խոստավանել, որ Ռուսական կենտրոնական կառավարութիւնը անսասան մնաց իւր որոշման վրա, երբէք շղիչաւ ոչ միայն խնդրատուների աղերսաներին, այլ անհետանիր թողեց Կարսի և Բաթումի նահանգպատեների պարբերաբար արած առաջարկները ու խնդրակները, Կարսի և Բաթումի վիճակներից այս կամ այն բէզին ու աղային հող չնորհելու համար: Ըստ օրինի այս նահանգների հոգը Պետական հաստարակական է հրատարակւած: 1884 թ. չուտեմբերի 26 կայսերական հրաժարակավ արգելւած է սրիէ, անհատի, կամ հիմնարկութեան հոգերը հաստատել, ծախել, կամ զրաւ ընդունել: Բայց և այնպէս զուրենաւոր Տոմիչը կարողացաւ թագաւոր կայսրին մի հրովարտակ ստորագրել տալ, բուրդ էօմէր աղային չորս հարիւր զենեատին հող չնորհելու Աղ-զոմ զիւզում, Կարսի գտառում, մասնաւոր սեփականութեան արտօնութիւններով: Սա մի շար և վարակիչ օրինակ է, որը հրապարել է Կարսի նահանգի նախկին թէզերի ձիւտեկեր թոռներին և բաղացի զրամատէրներին, որի առաջն առնելու է խիստ օրէնսդրական սրտումով: Արգահանցի Գիւլում-Օդի

բէգերի շառաւիղները, Աջարեցի Շերիֆ-բէգի ազգականները, Օլժեցի Քոռ Հիւսէյին-բէգի Ծռաները, Շիրակեցի Մագաթ բէգի, Ղարդ Իսմայիլ Փաշացի, Խոսկ-բէգի ցեղակիցները, Կաղզմանցի Օսման-բէգի Ժառանգները և ուրիշ բարդ շէլխեր ու տառչնորդներ գեռ մինչև այսօր յոյս ունեին, որ իրենք ել մի օր բարդ Էօմիր-աղայի նման մի բարի-ժամի պատճելով կարծանան այգափիսի շնորհների:

26. Եթէ մի զինուղական հայեացը զցենք Կովկասի այն գիւղերի ազգաբնակութեան վրա, սրբնը մատնւած են խաների, բէգերի և ազգաբների ճիրաններն, եթէ հնարաւորութիւն ունենանք մտնելու այդ թշւառ ժողովուրդի յարկի ծածկի տակ ըննելու գրանց կենցագը, կարսդ սիտի լինինը անմիջապէս մի հայեացը նկատել ու զգալ, թէ ի՞նչ զարհուրելի տաժանակիր կեաների է գատապարտւած այդ սորումնի գատակարգը, սրբ տարին տասներկու ամիս օրական տասնեւթ ժամ ձկտում է, տանջուում, կուռուց ցրտի, քամու, արեի և տապի հետ, անվերջ լծւած է ու բաշում է արօրի ու գութանը իւր վոխտ լծկանի հետ, բայց օրերը մժնացնում է բաղցած, տկլոր, զոգում է ամրուց մարմնով, ոչ միայն խօնաւ գետնափար բնակարաններում, այլ նոյն իսկ թմռերի շարքը փոած խշտեակում պառկած տեղն անգամ: Ական տանում է ոչ միայն հոգագործի արգիւնաբերած հացանատիկների, գարմանի, բանջարի և մրգի երրորդ մտսր, այլ նրան ծաներաբերում է այսպիսի ծանր, երբեմն սոսկալի տուրերով, որ թշւառին շշմեցնում է և ցնորեցնում է: Այս զարհուրելի վիճակումն է ինչպէս Ախա-

բալակի ստերջ հողի վրա ապրուզ երկրագործը, որի ցանքը գրեթէ ամէն տարի ցրտահար է լինում, նոյնու Սբարատեան բարերեր զաշտում բամբակ ու բրինձ մշակող թաթն անզամ, որը արեհար տարին տառներեկու ամիս գողացնում է և արտառուալի աշքերով արդինաբերած յանձնում է խանին ու բէգին, ձեռքերը կրծքին շարած մտսրում է իւր թշւառ ընտանիքին ըսպանացազ տանչանիքի, հալումաշի և անգութ բաղզի անողորմ խաղերի մասին: Այս սանչպարը, որ դարերից իվեր անխղելի կապերով շգթայւած է իւր յարմարեցրած, փափկացրած և մաքրած հողի հետ, որից նրան չին կարսդացել բաժանել խալիքները—իմամները, Բուզաներին ու Զինգիզ-խանները, այն երկամշակը, որ իւր քրտինքսվ ու արինով ողոգել ու պարաբացրել է իր արտն ու արօտը, այսօր գուրս է շորտւած Լոսի գաւառի Շիշթափա գիւղից, որեւէ կենացինայի ձեռքով, որը խլել է սանչպարից նրա հոգի փարձու է տեղ Մալական գաղթականներին և կալածքից հեռացրել է ընիկ շինական հայերին: Շիշթափեցների վրա եթէ չխոճար Կովկասի փոխարանն, նրանց շտար Կարսի գաւառի Մուստաֆա-աղակուշած անինակ գիւղը, սրանը ամբողջ 80 ընթանիք, մօտ ութ հարիւր հողի թափառական մուրացիկներ պիտի գառնային և շրջէին Կովկասի բազարներն ու աւանները: Փաստերի թիւն ու համբանիքը չկա, ամէն մարդ, սրի աշքերը փակ չեն, զիսւմ, ըննում և համոզւում է, թէ ի՞նչ տաժանակիր վիճակի է ենթարկւած Կովկասիցի հողագործը ուստ կնիտագինաների, կեզծ գրաֆների—խաների, բէգերի և աղալարների ճիրան-

ներում, չնորհիւ Ռուսական շինովնիների կարճաւաս
քաղաքականութեան և աններելի սխալանքին:

27. Ամբովզ Անդրկոմիկասում միմիայն Կարսի վիճակի
ժողովուրիցն է, որ տպատ լինելով թէզերի կամայա-
կանութիւններից, կարտացել է իւր վիճակը բարւորել,
ունիշաբարը վերջապէս 28 տարւան խայադ կառա-
փառութեան չնորհիւ կարսովացել է տնտեսական վյր-
ծերը կարգաւորել: Բայց այսուել էլ աշքի է ընկնամ
գուման Բիւրօկրատիայի անարդար և խորագիր մերե-
նայութիւնները, որով ուղում է անպատճառ վերանո-
րագել տիրուած ցեղերի արտօնութիւնները՝
խիստ զոյներով իրարից զանազանել: Օրինակի համար
ուուսական տարրերը՝ Մալարս, Մալական, Թօնո-
րուր գաղղթականները, բազի միանալ ոտացած օժան-
դակութիւնները՝ վոզով ու փայտով, ստացել են ամէն
մի անձի համար տրու, էզ, ձեր, երեխա, 10—15
զեսիատին հող, խոկ ընիկ հայերը ունին միմիայն
1—3 զեսիատին հող, Բնիկլ թուրքերը, թարարեա-
մանները, զարտփափազները ունին 4—5 զեսիատին
հող անձի վրա, խոկ գաղթական օրթողորս յոյնե-
րին, որոնք զաղթել են Տաճկաստանից, տրւած է 6—8
զեսիատին: Լեռնական ըրտերը տրոտառեզեր ունին
անձին 12—15 զեսիատին, խոկ հայերի շատ զիւզեր ոչ
միայն ամարանոյ (եալլա) չունին, այլ իրենց ուն-
մաններում տրոտառել էլ չունին, այնինչ Կարսի հա-
մակի արօաններով՝ Ղարբ- գաղ օգտում են Մուզուի
զաշտեցիները և այն և այն:

Փողովուրզին անկախ պետական հովեր բաժանե-
լու հակառակարդ կարւած առելք ազնւականներին խոր-

հուրդ կտայի գտլ Կովկաս ըննել ինչպէս Կարսի վի-
ճակի Պետական հովերի մշակութիւնը և զիւզացու աղ-
բուստը, նայնապէս Ախալքալակի աղալարների զիւզացու
գրութիւնը, որոնց հովերը զրեթէ զանազանութիւն չու-
նին Կարսի հաճանդի հովերից:

Վերջացնելով մեր հետազոտութիւնը, շեշտում ենք
մեր եղանակակիւթիւնները.

Ա. Խողամը տիրելով ամբողջ ութը գար Կովկասի
բոլոր գաւառները, այս տեղ հաստատեց և սովորա-
կան զարձաւ հողի համայնականութիւնը: Հողը պէտք
է ճանաչել պետական, բաշխել երկրագործ գասակար-
պին առանց որիէ վարձատրութեան:

Բ. Հողի երեսից օգտաելու արտօնութիւնը բացար-
ձակարար երկրագործ և անասնապահ ժողովրդի ան-
կապտելի իրաւունքն էր և պիտի լինի, պիտի վերահաս-
տատի առանց երկար ձգձգելու:

Գ. Հողի միջից գուրս եկած ամէն տեսակ զանձ
կամ հանր համայնական պետական գանձարանի սեփա-
կանութիւնն է ճանաչել ութը գար, Կովկասի հանրերից
և ոչ մէկին չի կարող տիրել որիէ մասնաւոր անհատ
կամ կալւածատէր: Անհրաժեշտ է բոլոր հանրերը պե-
տականացնել և ստուարների ձեռք բերած փաստա-
թղթերը ոչնչացնել:

Դ. Կովկասի բոլոր հովերը լինելով համայնական-
պետական, չի կարող որիէ զիւզի, անտառի տիրել որ-
իէ անհատ, խան կամ թէզ: Զէզորացնել հոգատէրնե-
րի իշխանութիւնը որիէ զրական օրինքավ:

Ե. Խուսական չինովնիկութիւնից սխալմաներով,
խարեւթիւնով կամ տասնամետ ժամանցի ոյժով կարդ-

ւած կալւածագրելը անվաւեր հրատարակել, ջնջել իսպառ զրանց ոյժը:

Զ. Համայնական հոգերի ազատ մասերով նախ քառարել տեղական-քնիկ հողագուբրի երկրագործներին, ապա մերձաւոր գաւառացիներին, և վերջապէս մօտաւոր ի հեռաւոր նահանգների հողագուբրիներին:

Է. Դիել զրական և անփափոխելի օրէնք, որ ոչ մի հաստատութիւն չկարողանա հողից զրկել որիէ զիւզացու, կամ գաղթեցնել հեռաւոր նահանգ, որիէ քառարական, կամ բրէքական յանցանքների և նախատկեների համար: Ընթականը միայն ապատ կամքով կարող է թողնել իր հողը և քաղաք տեղափոխել: Եյս գէպրում նա չի կարող բռնանալ իւր ընտանիքի անդամների կամքի վրա, նրանք եթէ, չեն ցանկալ գաղթել, նրանց վրա չի կարուզ բռնանալ, ընտանիքի որիէ անդամը

Ը. Հողերի բաշխման ժամանակ ինկատի ունենալ երկրի կիմայական պայմանները. գաշտային ծովի մակերեսովից 50-100 սաժէն բարձրութեան վրա ապրուզ ժողովրդին չթոյլատրել բնակութիւն հաստատել այն լինեալանջների և սարահարթների վրա, որոնք 700-1000 սաժէն բարձրութիւն ունին ծովի մակերեսովից ի ընդհակառակ:

10 Մայիսի 1906 թ.

Կ ա ր ո

Վ ե ր ջ



ՀԵՂԻՆԱԿԻ

Աժիատութիւններ առանձին պատրաստ կամ լոյս տեսած այլ եւ այլ պարերական հաստատկութիւնների մեջ:

Վ ե ր ջ Ա ն գ ո ւ

1. «Ալմաս» Մոսկվայում 1892 թ. Քարխուզարկանցի տպ.
2. «Ալիշելիսանում» Տարաղ Հանդիսի 1895 թ. № 31—35
3. «Աննելուն» Զ. Հայր. լրագիրն 1902 թ. № 141—162.
4. «Անտրական» Գործ լրագիր 1903 թ. № 1.
5. «Բերսայի Առաքելք» Նոր-Նախջ. 1899 Աւագեան տպ.
6. «Երմակներ» Երդիմական արկածներ Թաւրիդ 1905 թ.
7. «Երախտապահնանց» Ազրիւր Հանդիսի 1897 թ. № 11
8. «Երախտիք» » » 1899 թ. № 1
9. «Թուրումբաշիներ» Տարաղ » 1893 թ. № 11-12
10. «Թոփշի» » » 1904 թ. № 19-21
11. «Թոփփուզ» Թաւրիդ » 48 50
12. «Ժառանգներ» Նոր Նախջ. Աւագեան տպ. 1891 թ.
13. «Խառա-Խրխս» Տարաղ Հանդիսի 1893 թ. № 37-39
14. «Խեւ-Կարապես» Մուրճ Հանդիսի 1889 թ. № 5-8
15. «Ծպտեալ Սուլբան» Ազրիւր » 1898 թ. № 5-6
16. «Կաղ-Նազօ» Տարաղ » » 1893 թ. № 17-19
17. «Կարելի» և սիրելյա Թաւրիփում » 1905 թ. —
18. «Հարազաններ» » » 1897 թ. № 11-13
19. «Ղադի» Մշակ լրագրի » » 1892 թ. № 70-71
20. «Ճարահաս» Թաւրիփում » 1905 թ.
21. «Շխնոց» Նոր Նախջ. Աւագեան տպար. 1898 թ.
22. «Ոսկե Ռեգին» Գաղափար Հանդիսի 1894 թ. № 2
23. «Պարտիք» Զ. Հայր. լրագրի » 1903 թ. № 162 176
24. «Ջաւանիր» Թաւրիփում Թեմական տպ. 1904 թ.
25. «Սարբազ» Տարաղ Հանդիսի » 1903 թ. № 2.
26. «Աեւ Քաղաք» » » 1898 թ. № 2-25
27. «Սօֆիքա» Մուրճ » » 1883 թ. № 7-8
28. «Վիճակ» Թաւրիփում » 1905 թ.
29. «Վիշապ» Լումա » » 1905 թ. № 10
30. «Վիշապի առագաստ» Ըզրիւր Հանդ. 1908 թ. № 10
31. «Փաւա» Տարաղ Հանդիսի » 1898 թ. № 38
32. «Վիլեալայի Գաղթենիքը» Տարաղ Հան. 1899 թ. № 22-5
33. «Քու-Եղիկ» Թիֆլիս Վարդանանցի տպար. 1898 թ.
34. «Քիւլիան Բելի Տարաղ Հանդիսի 1893 թ. № 14-16
35. «Օրինական ժառանգ» Թաւրիդ Թեմական տպ. 1903 թ.
36. «Շուշան» Ազրիւրգութիւն Պատելլրուրգ. 1890 թ.
37. «Սարաֆ» Թիֆլիս » » 1893 թ.
38. «Կուռք» պօէմա Ազրիւր » » 1897 թ. № —

ՀԵՂԻՆԱԿԻ ԵՐԳԵՐԸ ՇԱԼԵՐԻՄ Ե՞Ն

Հ Ի Վ Ա Կ Ա Ն

ԵՐԿԵՐԻ ՓՈՊ. ՊՎ. ՍՃ. ԱՒ. Ն

| | | | | |
|-----------------------|----------------------|--------------|---------|------|
| ՊԲՏԿԵՐՆԵՐ | Տասը Պատ. | Թուրբահայերի | կեանքից | 1 ր. |
| ԳԻՒ-ԵՎԵԼՈՅԵՐ | ԳԵՂՑՆԵՔԻ | " | " | 1 ր. |
| ԸԼՄՈՈՑ, 1 հատոր | " | " | : | 1 ր. |
| ԸԼՄՈՈՑ 2 | " | " | " | 1 ր. |
| ԶԲԽՈՀՔ 77-78 թ. Թուս. | Թուրբ. | կուից արկած. | 1 ր. | |
| ՎԻԳԵԿՆԵՐ | Երկու վէպ. | Ժբահայերի | կեանքից | 1 ր. |
| ԲԺՄԵԾՆԵՐԸ | Երեք պատկեր | " | կեանքից | 1 ր. |
| ԿԵՐԵԼԻ | Է ՍԻՐԵԼ պատմական վէպ | | | 1 ր. |

Հատիք թղթի իւրաքանչփակ հատ. 2 լ.

| | | | | |
|----------------|--------------------|---------|---|-------|
| ԽԵԼ-ԿԸՐԵՊԵՑ | Թբքահայ. | կեանքից | " | 1 ր. |
| ՔՈԹ-ԵԳԻԿ | " | " | " | 30 կ. |
| ՃԽՆՈՑ | " | " | " | 30 կ. |
| ԺՐԱՑՆԵՐ | " | " | " | 30 կ. |
| ԲԵՐՄԸՑԵԼԸ | " | " | " | 25 կ. |
| ԹՈՒԼՈՒՄԲԱՋԻՆԵՐ | " | " | " | 10 կ. |
| ԴԻՄԵԿՆԵՐ | Երգիծական արկածներ | " | | 50 կ. |

Ո Վ Բ Ե Ր Գ Ա Կ Ա Ն

| | | | | |
|-----------------------|---------|---------|---|-------|
| ՅՈՒՅՈՒՆ Երեք արարւած. | Թբքահայ | կեանքից | " | 1 ր. |
| ՍՈՐԻԾ հինգ | " | " | " | 30 կ. |

| | | | |
|---------------|----------------------|---------|-------|
| ԽԻԼԸՑՔԸ Պատմ. | տեսութիւն Սիւննիների | մասին | 50 կ. |
| ԵՐՄԸՑՔԸ | " | Ճիաների | " |
| ՀՈՂԸՑՔԸ Թիւնը | կով ԿԸՐՈՒՄ | | 10 կ. |

Դիմել Թիֆլիս Կենտրոնական և Գուտեմբերգ գրավաճառանոցները

Գրավաճառները կարող են դիմել նոյնպէս.

ATRPET ALEXANDROPOL RUSSIE

Արոնց կը լինի սովորական 20 % զիջում:

ՀՀ Ազգային գրադարան



NL0204244

